ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» հոկտեմբերի 2019 թվականի N:231 ք.Գյումրի

ԼԻՊԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալի 2019 թվականի սեպտեմբերի 27-ի N:01.1/27-2/15921-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի 2019 թվականի հոկտեմբերի 2-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին 2019 թվականի հոկտեմբերի 9-ից 11-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ «Մաստեր Սթայլ» ուսումնական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ «Ծրագրային բյուջետավորում» թեմայով վերապատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը երեք օր՝ 2019 թվականի հոկտեմբերի 9-ից 11-ը ներառյալ:
3. Լիպարիտ Մարտիրոսյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Արմեն Համբարձումյանին:

4. Լիպարիտ Մարտիրոսյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է